

ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ 50 (1 ՆՈՅԵՄԲԵՐ 1925—1 ՆՈՅԵՄԲԵՐ 1975) ԵՎ ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՖՏՈԿԵՖԱԼՈՒԹՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻ (1885—1975) ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒԽԱՐԵՍՏՈՒՄ

1975 թ. նոյեմբերի 1-ից 4-ը Բուխարեստում հանդիսավոր իրադրության մեջ նշվեցին **ռումին օրթոդոքս եկեղեցու պատրիարքության հաստատման 50 և ռումին օրթոդոքս եկեղեցու աֆտոկեֆալության 90-ամյակին** նվիրված հանդիսությունները:

Սույն հանդիսությանը մասնակցել են Կ. Պոլսի Տիեզերական, Ալեքսանդրիայի, Անտիոքի, Երուսաղեմի, Սերբիայի օրթոդոքս պատրիարքությունների, ինչպես նաև Հունաստանի, Կիպրոսի, Լեհաստանի, Ֆինլանդիայի օրթոդոքս եկեղեցիների ներկայացուցիչները:

Ռուս պրավոսլավ եկեղեցու պատվիրակությանն անձամբ գլխավորել է համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Պիմենը: Իսկ բուլղար օրթոդոքս եկեղեցու պատվիրակությանը գլխավորել է Նորին Սրբություն Մաքսիմ Պատրիարքը:

Հանդիսություններին մասնակցել է նաև Վատիկանի Քրիստոնեական միության քարտուղարությունը՝ կարդինալ Հովհաննես Վիլբրանդոնի գլխավորությամբ:

Արևելյան հին ուղղափառ եկեղեցիների կողմից հանդիսություններին ներկա են եղել Եթովպիայի, Եգիպտոսի ղպտական, Հնդկաստանի մալաբար եկեղեցիների ներկայացուցիչները:

Հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու և Ամենայն Հայոց Հայրապետի, սույն հանդիսությանը ներկա եղան Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը և Մայր Աթոռի միաբան տ. Զավեն եպս. Չինչինյանը՝ Եգիպտոսից:

Նոյեմբերի 1-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 9-ին, Բուխարեստի պատրիարքական Մայր տաճարում կատարվել է հանդիսությունների պաշտոնական բացումը՝ առավոտյան աղոթքով:

Այնուհետև պատրիարքական պալատում ռումին օրթոդոքս եկեղեցու Սինոդի դահլիճում գումարվել է հանդիսավոր նիստ, ուր բացման ճառով հանդես է եկել Նորին Սրբություն Ժուստինիան Պատրիարքը՝ սրբազան Սինոդի նախագահը:

Ապա հանդես է եկել Մոլդավիայի և Սուչավայի Ժուստին միտրոպոլիտը՝ օրվա հանդիսություններին նվիրված բովանդակալից ճառով:

Պատրիարքական փոխանորդ և ս. Սինոդի քարտուղար Անտոնին Պլոյեշտեանուն եպիսկոպոսը հանդես է եկել երկու հոբելյանների պատմության վերաբերյալ սինոդական փաստաթղթերի ընթերցմամբ:

Սինոդական սույն փաստաթղթերն այնուհետև ստորագրել են հանդիսությանը ներկա բոլոր եկեղեցիների բոլոր ներկայացուցիչները:

Հանդիսավոր նիստն ավարտվել է Նո-

ին Սրբություն Տ. Ժուստինիան Պատրիարքի փակման ճառով:

Ժամը 14-ին քույր եկեղեցիների ներկայացուցիչների պատվին տրվել է պաշտոնական ընդունելություն, ուր, հանուն ռումին օրթոդոքս եկեղեցու, բոլոր հյուրերի ներկայությունը ողջունել է Տրանսիլվանիայի միտրոպոլիտ **Նիկոլային:**

Ընդունելության ժամանակ հյուրերից շատերը ջերմ խոսքերով շնորհավորել են ռումին օրթոդոքս եկեղեցու պատրիարքության 50 և աֆտոկեֆալության 90-ամյա հոբելյանները:

Այս առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույնի և շնորհավորանքի գիրը ընթերցել է Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, ռումիներեն լեզվով (Հայոց Հայրապետի սույն ճառը տես «Էջմիածին» ամսագիր, սույն համար, էջ 3):

Հայոց Հայրապետի ողջույնի գրի ընթերցումից հետո, հանդիսավոր իրադրության մեջ, հանուն Հայոց Հայրապետի, տ. Տիրայր եպս. Մարտիկյանը Նորին Սրբություն Տ. Ժուստինիան Պատրիարքին է հանձնում ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի ոսկե շքանշան:

Նոյեմբերի 2-ին, կիրակի օրը, ս. Սպիրիդոն Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ են մատուցում ռուսաց Տ. Պիմեն, Բուլղարիայի Տ. Մաքսիմ և Ռումինիայի Տ. Ժուստինիան Պատրիարքները:

Ս. պատարագի ավարտին օրվա հոբելյանական հանդիսությունների պատմական նշանակության մասին քարոզում է Օլտենիայի միտրոպոլիտ Տեոկտիստ արքեպիսկոպոսը:

Ժամը 13.30-ին Ռումին կրոնական գործերի խորհուրդը «Աթենե-Պալաս» հյուրանոցում, ի պատիվ հանդիսությանը ներկա բարձրաստիճան բոլոր հյուրերի, կազմակերպվում է ընդունելություն:

Նոյեմբերի 3-ին, երկուշաբթի օրը, բոլոր հյուրերն ուխտագնացության են մեկնում «Կուրտեա դե Արճես» վանք, այցելում արքայական եկեղեցի և աստվածաբանական ճեմարան: Ճեմարանի տեսչությունն ընդունելություն է կազմակերպում՝ ի պատիվ հյուրերի:

Նոյեմբերի 4-ին, երեքշաբթի օրը, հյուրերն այցելում են Բուխարեստում պատրիարքական հաստատություններ, այդ թվում՝ տպարան, ս. Անթիմ վանք և աստվածաբանական ճեմարան:

Երեկոյան ժամը 18-ին Բուխարեստի համալսարանի աստվածաբանական ինստիտուտի սրահում, ի պատիվ հյուրերի, կազմակերպվում է կրոնական համերգ, որին իրենց մասնակցությունն են բերում Բուխարեստի քահանայից, աստվածաբանական ճեմարանի և ռումին պատրիարքության երգչախմբերը:

Նոյեմբերի 9-ին, կիրակի օրը, հոբելյանական վերջին հանդիսությունը տեղի է ունենում Կոստանցա քաղաքում: 325 թ. Նիկիայի Տիեզերական ժողովին մասնակցած եպիսկոպոսների ցանկում հիշվում է նաև Թոմիս-Կոստանցայի եպիսկոպոսը: Այս փաստի 1650-ամյակի առթիվ Կոստանցա քաղաքում հաստատվում է առաջնորդական փոխանորդություն:

Հանդիսությանը մասնակցում են նաև տ. Տիրայր և տ. Զավեն սրբազանները:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Հայոց Հայրապետի, մի անգամ ևս սրտագին շնորհավորում է ռումին օրթոդոքս եկեղեցու և ռումին ժողովրդի հոբելյաններն ու մաղթում ջերմորեն, որ է՛լ ավելի ամրապնդվեն ռումին և հայ եկեղեցիների համագործակցությունը էկումենիկ ոգով, ռումին և հայ եղբայրական ժողովուրդների պատմական բարեկամությունը՝ աշխարհում կայուն խաղաղության ապահովման նվիրական աշխատանքներում: